ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

-- հունվարի 2021 թվականի №--
քաղ. Երևան

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ԳՅՈՒՂԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ №9 ՏԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղի Շահումյան փողոցի №9 տան (այսուհետ՝ Առանձնատուն) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացրած՝ Առանձնատան բնակիչ Մարիամ Սարգսյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը,

բ) Հայաստանի Հանրապետության սոցիալական աջակցության Վաղարշապատի տարածքային գործակալության կողմից տրամադրված 2020 թվականի օգոստոսի 28-ի տեղեկանքը, որի համաձայն Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 30,91,

գ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղի գյուղապետի կողմից տրամադրված 2020 թվականի օգոստոսի 24-ի տեղեկանքը, որի համաձայն՝ Դիմող անձը բնակվում է Առանձնատանը,

դ) Դիմող անձի 2021 թվականի հունվարի 21-ի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սույն թվականի հունվարի 26-ի №ԴԳ366 գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս առարկություն չունեն առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է առանց միացման վճարի գանձման.
   2) չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2021թ.